

**ԹՈՒՐԳԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

21-րդ դարի առաջին տասնամյակը Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ աչքի ընկավ մի շարք առանձնահատկություններով: 2000-ականների առաջին կեսին արձանագրված ներքաղաքական հարաբերական կայունությունը, տնտեսական զարգացման բարձր տեմպերը, հասարակական արժեքների վերափոխման գործընթացները ստեղծեցին փոխլրացնող ձևաչափ, որի շրջանակում էլ ուղղորդվեցին քաղաքական համակարգի բարեփոխումները: Սոցիալ-քաղաքական նպաստավոր մթնոլորտի ձևավորման շնորհիվ նախ վարչապետ Բյուլենթ Էջևիթի կոալիցիոն կառավարությանը, ապա «Արդարություն և զարգացում կուսակցության» (ԱԶԿ) կառավարությանը հաջողվեց կարճ ժամանակահատվածում իրականացնել մի շարք քայլեր, որոնք պարարտ հող ստեղծեցին բարեփոխումների շարունակականության համար: Եթե 2001-2006 թթ. ընթացքում սահմանադրական բարեփոխումները հնարավոր էր իրականացնել խորհրդարանի ներսում՝ խորհրդարանական ուժերի համադրման շնորհիվ, ապա 2007թ. հետո փոխվեցին սահմանադրական փոփոխությունների մեթոդները և առավել կիրառելի դարձան հանրաքվեները: Սույն հոդվածում ներկայացվում են 2000-ական թթ. տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների հիմնական փուլերը, դրանց բովանդակային առանձնահատկությունները, բարեփոխումների դանդաղեցման պատճառները և քաղաքական օրակարգում առկա խնդիրները:

Սահմանադրական փոփոխությունները 2001-2010 թթ.

Թեև 1999 թ. Թուրքիային արդեն շնորհվել էր ԵՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակ, սակայն հաջորդ երկու տարիների ընթացքում Բյուլենթ Էջևիթի կառավարությանը չէր հաջողվել լայնածավալ ու բովանդակային բեկում մտցնել ԵՄ անդամակցության բանակցությունների փուլը մեկնարկելու առումով: ԵՄ-Թուրքիա բանակցություններում առկա էին մի շարք ոլորտներ, որոնցից հատկապես առանձնանում էին դատական, պաշտպանական, իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերում իրականացվելիք բարեփոխումները: Եռակուսակցական կոալիցիոն կառավարության ներսում առկա զաղափարական տարբերություններով հանդերձ, 2001թ. հոկտեմբեր – 2002թ. օգոստոս ժամանակահատվածում Բյուլենթ Էջևիթի կառավարությանը հաջողվեց ընդունել սահմանադրական փոփոխության երեք փաթեթներ³⁴⁶, որոնք իրենց ծավալային առումով գերազանցում էին հաջորդ վեց փաթեթներին: Այսպիսով, սահմանադրական բարեփոխումների ամբողջ դափնիները ԱԶԿ-ին վերագրելը լիովին չի արտացոլում իրականությունը:

Նույնն էր իրավիճակը նաև տնտեսական բարեփոխումների պարագայում. 2000-ականների տնտեսական վերելքի համար ԱԶԿ-ն պարտական էր նաև Էջևիթի կառավարությունում տնտեսական զարգացման նախարար աշխատած Քեմալ Դերվիշին՝

³⁴⁶ Yesilada B., Turkey's candidacy for EU membership, *The Middle East Journal*, v. 56, n. 1, 2002, pp. 94-111: Չորրորդ և հինգերորդ փաթեթներն ընդունվել են 2002 թ. դեկտեմբերի 3-ին և 4-ին՝ ԱԶԿ-ի հաղթանակից մեկ ամիս անց:

տնտեսական ու կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակման և իրականացման համար: 2000-2001թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համատեղ Բ. Դերվիշը մշակեց տնտեսական բարեփոխումների ու այդ ոլորտին վերաբերող իրավական դաշտի փոփոխությունների ծրագիր³⁴⁷, որոնք սկսվեցին Բ. Էջնիթի վարչապետության օրոք և շարունակվեցին արդեն Աբդ. Գյուլի, ապա՝ Ռ. Էրդողանի վարչապետության տարիներին:

1982 թ. սահմանադրությունը, որն իր բովանդակությամբ ու կիրառման մեթոդներով ուներ ընդգծված հակաժողովրդավարական բնույթ, կարելի էր փոխել երկու ճանապարհով՝ կա՛մ նոր սահմանադրության ընդունմամբ, կա՛մ սահմանադրության խնդրահարույց հողվածները փոխելով: 2002թ. նոր սահմանադրության ընդունման ուղղությամբ գործնականում անհնար էր քայլեր ձեռնարկել, քանի որ ԱԶԿ-ն չէր վայելում քեմալականության պահապանների՝ ԶՈԻ-ի ղեկավարության, դատաիրավական և բյուրոկրատական համակարգի վստահությունը, հետևաբար, այդ ուղղությամբ ԱԶԿ-ի ձեռնարկած ցանկացած քայլ կդիտվեր որպես քեմալական սկզբունքների խախտման ակնհայտ փորձ ու ամենայն հավանականությամբ կկանխվեր³⁴⁸: 2002 թ. նոյեմբերյան խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ ստացավ 363 մանդատ, որն ընդամենը 4-ով էր պակաս խորհրդարանում սահմանադրական մեծամասնությունից, հետևաբար, անկախ պատգամավորների, իսկ որոշ դեպքերում անգամ ընդդիմադիր ՀԺԿ-ի հետ համագործակցելու պարագայում հնարավոր էր հեշտությամբ կատարել սահմանադրական փոփոխություններ, որն էլ հաջողությամբ իրականացվում էր ԱԶԿ-ի անդամների կողմից:

ԱԶԿ-ի քաղաքական երկարակեցությունը պայմանավորված է նախ և առաջ ԵՄ բարեփոխումներին նրա նվիրվածությամբ: 2002 թ. նոյեմբերից-հունվար ամիսներին, երբ անգամ իշխանության լծակները դեռ ամբողջությամբ չէին անցել ԱԶԿ-ին, վերջինիս ղեկավարները սկսեցին ինտենսիվորեն գրոհել եվրոպական մայրաքաղաքները³⁴⁹: Այդ քայլն առնվազն երկու նպատակ էր հետապնդում. ապահովել ԵՄ-ի քաղաքական աջակցությունը ԱԶԿ-ին և ընդգծել ԱԶԿ-ի նվիրվածությունը եվրոպական ուղղվածությանը: Այս առումով 2002-2006 թթ. դարձան անկյունաքարային Թուրքիայում լայնածավալ քաղաքական բարեփոխումների իրականացման առումով: Առավել նշանակալից էր 2004 թ. ղեկտեմբերին Բրյուսելում ԵՄ պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթնաժողովում կայացված որոշումը, որով 2005թ. հոկտեմբերից մեկնարկեց Թուրքիայի եվրաանդամակցության բուն բանակցությունների գործընթացը:

ԱԶԿ-ն ընտրեց նվազ առճակատման ուղին և զգուշությամբ ու հետևողականորեն սկսեց իրականացնել սահմանադրական, օրենսդրական ու ենթաօրենսդրական բարեփոխումներ: Փաթեթային փոփոխությունների մոտեցումը հնարավորություն տվեց նախ և առաջ սկսել ԵՄ-ի համար և Կոպենհագենյան չափորոշիչների տեսանկյունից առաջնային համարվող հողվածներից: 2002-2006 թթ. Թուրքիայի խորհրդարանն ընդունեց

³⁴⁷ Մանրամասն տես Miller C., Pathways through financial crisis: Turkey, *Global Governance*, v. 12, n. 4, 2006, pp. 449-464.

³⁴⁸ Ավելին, 2008 թ. սկսված գեներալների ու բարձրագույն զինվորականների ձերբակալությունները վկայում են, որ սահմանադրության փոփոխությունների մեթոդն անգամ քեմալականների համար համարվում էր անընդունելի: Դրա լավագույն ապացույցն են հանդիսանում 2003 թ. նախատեսված ռազմական միջամտության մասին տեղեկատվության արտահոսքը:

³⁴⁹ Baran Z., The dating game: Turkey, Europe and the American matchmaker, *The National Interest*, n. 75, 2004, p. 54.

օրենսդրական փոփոխությունների ևս 6 փաթեթ, որոնց արդյունքում, 2001-02թթ. փոփոխությունների հետ միասին, փոխվեց սահմանադրության 1/3-ը:

2007թ. ապրիլ-հուլիսյան ամիսների քաղաքական ճգնաժամի, հուլիսյան խորհրդարանական ընտրությունների և ՁՈԻ-քաղաքացիական իշխանություններ լարված հարաբերությունների շարունակականության պատճառով ոչ միայն դանդաղեց բարեփոխումների ընթացքը, այլ նաև իրական վտանգ առաջացավ հետընթացի համար: Այս գործընթացի արդյունքում փոխվեցին նաև քաղաքական համակարգի արդիականացման մոտեցումները: Ի տարբերություն նախորդ ժամանակահատվածի՝ 2007-2010 թթ. ընթացքում սահմանադրական բարեփոխումները իրականացվեցին գերազանցապես հանրաքվեների միջոցով: 2008թ. եղան նաև փորձեր խորհրդարանում անցկացնել սահմանադրական փոփոխություններ, հատկապես կրոնական գլխաշորի արգելքը վերացնելու նպատակով, սակայն, Սահմանադրական դատարանը փոփոխությունները համարեց հակասահմանադրական³⁵⁰: Ի հակադրություն զինվորականության դերի աստիճանական նվազմանը՝ 2008 թվականից սկսած մինչև 2010թ. սեպտեմբերը զգալիորեն ակտիվացավ նաև դատախիրավական համակարգը և ընդհուպ ՄԴ-ում հայց ներկայացվեց ԱԶԿ-ի փակման պահանջով³⁵¹: 2010թ. իրականացված սահմանադրական փոփոխություններից հետո դատախիրավական համակարգը հայտնվեց մեկ այլ ծայրահեղության մեջ: Երկրորդելով Թուրքիայի փաստաբանների կարծիքը՝ իրավաբան Օզգյուր Աշքը նշում է, որ վերջին երկու տարիների ընթացքում կատարված օրենսդրական փոփոխությունների հետևանքով օրենսդիր, դատական և գործադիր իշխանությունների միջև սահմանագիծը լրոզվել է, իսկ դատախիրավական համակարգն այժմ էլ դարձել է ԱԶԿ-ի կողմից ղեկավարվող գործադիր իշխանության կամակատարը³⁵²:

ԵՄ-ի անդամակցության գործընթացի ներկա մակարդակը ևս բացասական է ազդում Թուրքիայի քաղաքական համակարգի փոփոխությունների վրա: Եթե 2000-ականների սկզբին ԵՄ-ի անդամակցության հեռանկարը կարևոր շարժառիթ էր ներքաղաքական բարեփոխումների իրականացման համար, ապա 2006 թվականից սկսած բարեփոխումներին ուղղված ներքաղաքական օրակարգը իջավ նվազագույն ինտենսիվության: Քաղաքական վերլուծաբան Ամանդա Փոլը նշում է, որ իրականում այնպիսի տպավորություն է, որ տնտեսական զարգացման աճի արդյունքում ինքնավստահություն ձեռք բերած Անկարան է ցանկանում իր պայմանները թելադրել ԵՄ-ին³⁵³: Ավելին, ըստ նրա, Թուրքիայի անդամակցությանը բացահայտ ընդդիմացող Ն. Սարկոզիին փոխարինած Ֆր. Հոլանդի ընտրությունը Ֆրանսիայի նախագահի պաշտոնում, ԵՄ-ի «Նոր դրական օրակարգի» մեկնարկումը և այլ դրական ազդակներ պետք է, որ առավել տրամադրող մթնոլորտ ստեղծեն Թուրքիայի քաղաքական վերնախավում³⁵⁴, դրան պետք է հավելել նաև ԵՄ-ի նախարարության հիմնումը 2011թ. և նախարարի պաշտոնում Էզեմեն Բաղըլի հաստատումը: Իրականում, ռոտացիոն սկզբունքով Կիպրոսի Հանրապետության կողմից ԵՄ նախագահության ստանձնումը, իսկ

³⁵⁰ Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.), Երևան, 2008, էջ 178-187:

³⁵¹ Akarcesme S., The EU anchor, Turkish democracy and the future of the AK Party, *Insight Turkey*, v. 10, n. 2, 2008, pp. 125-126.

³⁵² Aşık Ö., Legal Reforms in Turkey: Ambitious and Controversial, *Turkish Policy Quarterly*, v. 11, n. 1, 2012, p. 147.

³⁵³ Paul A., Turkey's EU Journey: What next?, *Insight Turkey*, v. 14, n. 3, 2012, p. 27.

³⁵⁴ Նույն տեղում:

Թուրքիայի կողմից այդ նախագահության բոլորումը բացասականորեն ազդեցին Թուրքիայի հեղինակության և ինտեգրման գործընթացի վրա:

Թեև ԵՄ-ին անդամակցելու ճանապարհին Թուրքիայի իրականացրած օրենսդրական ու ենթաօրենսդրական բարեփոխումները հսկայածավալ էին, սակայն, ինչպես և կարելի էր ենթադրել, դրանց իրականացման համար հարկավոր էր ցուցաբերել քաղաքական կամք ու հետևողականություն: Թուրքիայում օրենսդրական փոփոխությունների հատվածային ու կամայական կիրառման դրսևորումները դարձան խորքային քաղաքական բարեփոխումների իրականացման հիմնական խոչընդոտը: Փոփոխություններին բնորոշ էին նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին դրանց ընդունման արագընթաց բնույթը, հանրային իրազեկվածության մակերեսային աստիճանը, բյուրոկրատական համակարգի և հատկապես քաղաքացիական ծառայության համակարգի աշխատակիցների ցածր տեղեկացվածությունը: Աշըքը նաև մատնանշում է, որ թեև օրենքները կարելի է փոխել մեկ գիշերվա ընթացքում, սակայն հասարակական մտայնությունը հեշտությամբ չի ձևափոխվում: Ըստ նրա, տարբերվում է նաև Թուրքիայի տարբեր շրջաններում օրենսդրական փոփոխությունների կիրառելիության աստիճանը՝ կախված տեղական մշակութային առանձնահատկություններից և ազգաբնակչության պահպանողական արժեքներից³⁵⁵:

Քաղաքական ազատությունների և համակարգային բարեփոխումների կապակցվածությունը

Այս երկու գործոնների փոխկախվածության առումով ևս գործընթացը սկսվել էր շատ ավելի վաղ քան 2002 թ. և արդեն 1987 թ., 1990 թ., 1993 թ., 1995 թ., 1999 թ. (երկու անգամ) և ապա 2001 թ. կատարված սահմանադրական փոփոխությունները մեղմացրել էին քաղաքական ու քաղաքացիական իրավունքների և ազատությունների վրա դրված սահմանափակումները³⁵⁶: 1982 թ. սահմանադրությունն արգելում էր կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը, սակայն 1995 թ. սահմանադրական փոփոխությամբ այդ արգելանքը վերացվեց: Քաղաքական կուսակցություններն իրավունք ստացան երիտասարդական ու կանանց թևեր ստեղծել, ընտրության իրավունքի շեմը 20-ից նվազվեց 18-ի, համալսարանականներն իրավունք ստացան անդամակցել կուսակցություններին ու զբաղվել քաղաքական գործունեությամբ, պատգամավորներն իրավունք ստացան փոխել կուսակցությունը, վերացվեց նաև Սահմանադրական դատարանի կողմից արգելված կուսակցության պատգամավորների մեկ այլ քաղաքական կուսակցության միանալու վրա դրված արգելքը: 1990-ականներին այս փոփոխությունները կարևոր դեր կատարեցին քաղաքական դաշտի առողջացման, քաղաքացիական դաշտի հետ համագործակցության և նոր ուժերի ներգրավման առումներով:

2000-ականներին հաստատութենական բարեփոխումների առումով առավել հաճախ խոսվում էր ԶՈՒ-ում տեղի ունեցած բարեփոխումների և զինվորականություն-քաղաքացիական իշխանություններ հարաբերություններում արձանագրված փոփոխությունների մասին: 2003-04 թթ. ԱԶԿ-ն սկսեց աստիճանաբար, առանց հավելյալ շտապողականության իրականացնել մի շարք բարեփոխումներ, որոնց նպատակը զինվորականության կողմից սահմանված և անքննելի համարվող դերակատարությունը սահմանափակելն էր: Առաջին քայլերն ընդգրկեցին Ազգային անվտանգության

³⁵⁵ Aşik Ö., նշված հոդ., էջ 149:

³⁵⁶ Gönenç L., The 2001 Amendments to the 1982 Constitution of Turkey, *Ankara Law Review*, v. 1, n. 1, 2004, p. 90

խորհրդում քաղաքացիական պաշտոնյաների օգտին համամասնության փոփոխումը, քարտուղարի պաշտոնում քաղաքացիականի նշանակումը և այլն³⁵⁷: ԵՄ-ի անդամակցության գործընթացում բարձրաստիճան գինվորականներն ակնհայտ զգուշավորություն և դիմադրություն էին դրսևորում, սակայն հանրային հայտարարություններում նրանք ԵՄ դիտում էին որպես Թուրքիայի հարյուրամյա արդիականացման տրամաբանական և վերջնական հանգրվան: Ավելին, նրանց ընկալմամբ, Եվրամիությանն անդամակցության շնորհիվ հնարավոր կլիներ վերջ տալ գինվորականության համար ներքին մարտահրավերներ համարվող իսլամականության վերելքին ու քրդական անջատողականությունը³⁵⁸:

2008 թ. սկսված Էրզենեքոնի դատավարությունը ևս զգալի ազդեցություն թողեց Թուրքիայի քաղաքական մշակույթի մեջ արմատացած մի շարք կարծրատիպերի վերացման առումով, և իրական հիմքեր դրվեցին գինվորականության դիրքերի ու լիազորությունների սահմանափակման ուղղությամբ: 2010 թ. սեպտեմբերյան սահմանադրական հանրաքվեով հաստատված փոփոխություններն էլ ավելի մեծ հարված հասցրին գինվորականության և դատաիրավական համակարգերի կողմից քաղաքականության վրա ներագոյման լծակներին: Զինվորականության նկատմամբ հասարակության մոտ առկա երբեմնի անվերապահ վստահությունը 2007-2011 թթ. ընթացքում սկսեց էականորեն նվազել, սակայն գինվորական որոշ շրջանակների համար քաղաքական դերակատարության նկատմամբ հետաքրքրությունը և շահերը շարունակում են մնալ ուղղորդիչ: Ումիթ Չիզրեն նշում է, որ միայն նոր սահմանադրությունը, նոր պաշտպանական քաղաքականությունը և նոր քաղաքական մշակույթը կարող են հիմք դառնալ գինվորականության նորացված դերակատարության համար: Մի շարք փաստաթղթեր՝ Ազգային անվտանգության և Ռազմական անվտանգության հայեցակարգերը շարունակում են մշակվել ու պահվել գաղտնիության պայմաններում, իսկ հանրային իրազեկվածությունը բավական ցածր է: Ազգային անվտանգության հայեցակարգը շարունակում է մշակվել ու սահմանվել գինվորականների կողմից: «Ազգային անվտանգության պետությունը» շարունակում է արդիական համարվել, իսկ արտաքին աշխարհի թշնամական տրամադրվածությունները շարունակում են գերիշխել գինվորական հռետորաբանությունում ու ընկալումներում³⁵⁹:

ԱԶԿ-ի իշխանության տարիներին քաղաքական համակարգի կարևոր փոփոխություններից էր նաև նախագահական և խորհրդարանական լիազորության ժամկետների կրճատումը: Եթե մինչև 2007թ. նախագահական ընտրությունները պետության ղեկավարն ընտրվում էր խորհրդարանի կողմից, ապա 2007 թ. սահմանադրական փոփոխությամբ հաստատվեց ժողովրդի կողմից ուղղակի ընտրության սկզբունքը, կրճատվեց նաև նախագահական կառավարման ժամկետը՝ 7-ից հասցնելով 5-ի, հաստատվեց գործող նախագահի երկրորդ անգամ անընդմեջ առաջադրվելու իրավունքը, կրճատվեց նաև խորհրդարանական լիազորությունների ժամկետը՝ 5-ի փոխարեն հաստատվեց 4-ը³⁶⁰: Ուշագրավ է այն փաստը, որ 2007 թ. խորհրդարանի լիազորությունների վերաբերյալ կրճատման դրույթը կիրառվեց փոփոխություններից 4 տարի անց, քանի որ խորհրդարանական ընտրությունները, ըստ սահմանադրության,

³⁵⁷ Phillips D., Turkey's Dreams of Accession, *Foreign Affairs*, v. 83, n. 5, 2004, p. 96.

³⁵⁸ Dogan A., Aydinli E., Ozcan N. A., The Turkish Military's March Toward Europe, *Foreign Affairs*, v. 85, n. 1, 2006, p. 77

³⁵⁹ Cizre U., Turkey at the Crossroads: From "Change with Politics as Usual to Politics with Change as Usual, *Insight Turkey*, v. 13, n. 4, 2011, p. 94

³⁶⁰ Gözler K., Halkoylamasıyla Kabul Edilen Anayasa Değişikliği Kanunlarının Resmî Gazetede Yayımlanması Sorunu, *Yaşama Dergisi*, Ekim-Kasım-Aralık, 2007, ss. 5-17.

պետք է անցկացվեցին 2012 թ.: Մինչդեռ, թեև 2011 թ. խորհրդարանական ընտրություններն արտահերթ չէին, սակայն ժամանակից շուտ անցկացվեցին սահմանադրական փոփոխության տարաբնույթ մեկնաբանման պատճառով³⁶¹:

Այս փաստն առավել ուշագրավ է նախագահի լիազորությունների ժամկետի հետ կապված ներքաղաքական քննարկումների համատեքստում: Ի սկզբանե, վարչապետ Էրդողանը և նրա մերձակա ԱԶԿ վերնախավը մտադիր էր ուղղորդվել խորհրդարանի ժամկետի փոփոխման սկզբունքով և գործող նախագահի լիազորություններն ավարտել 2012 թ. օգոստոսին (2007 թ. օգոստոսին Աբդ. Գյուլի նախագահ ընտրվելուց 5 տարի անց): Իրականում, 2012 թ. հունվարին Նախագահական ընտրությունների մասին օրենքը և ս. թ. հունիսին Սահմանադրական դատարանի որոշումը³⁶² վերջակետ դրեցին տարաբնույթ մեկնաբանություններին և, ի տարբերություն խորհրդարանականի, հաջորդ նախագահական ընտրություններն անցկացվելու են 2014 թ. օգոստոսին, այսինքն, հենվելով մինչև 2007 թ. սահմանադրական փոփոխություններով հաստատված ժամկետի (7 տարվա) վրա: Երկակի կերպով է մեկնաբանվում նաև 2012 թ. հունվարին ընդունված օրենքի այն դրույթը, որով Աբդ. Գյուլն իրավունք է ստանում կրկին առաջադրվել 2014 թ. նախագահական ընտրություններում: Մինչդեռ, եթե 2014 թ. օգոստոսն ընդունվում է որպես հաջորդ նախագահական ընտրությունների անցկացման ժամկետ (որպես մինչև 2007 թ. սահմանադրական փոփոխություններն առկա օրենքի պահանջի կիրառում, որով և հիմնավորվում է Աբդ. Գյուլի 7-ամյա լիազորությունների ժամկետը), ապա գործող նախագահը պետք է իրավունք չունենար առաջադրվել գալիք նախագահական ընտրություններում, որովհետև մինչև սահմանադրական փոփոխությունները 7 տարի կառավարած նախագահն իրավունք չունի առաջադրվելու: Եթե այս սկզբունքն է ընդունվում որպես հիմք, ապա Աբդ. Գյուլը կարող է առաջադրվել ոչ միայն 2014 թ., այլ նաև 2019թ. նախագահի ընտրություններում: Այսպիսով, սահմանադրական փոփոխությունների երկակի մեկնաբանության ու դրանց իրավական կիրառման առումով Թուրքիայի քաղաքական համակարգում առկա են ակնհայտ խնդիրներ:

Նախագահական համակարգի ներդրման հեռանկարները

Մեկ այլ կարևոր խնդիր է վարչապետ Ռ. Էրդողանի քաղաքական ապագան, քանի որ, լայն առումով, դրանից է կախված, թե ինչպիսի ուղղվածություն կունենան քաղաքական համակարգի բարեփոխումները: Էրդողանին հաջողվել է իր անձի շուրջ համախմբել ազդեցիկ քաղաքական գործիչների ու ստեղծել ուժեղ քաղաքական գործչի կերպար: Դեռ 2007 թ. ներքաղաքական ճգնաժամի օրերին ակնհայտ էր, որ առկա պատճառների շարքում կարևոր էր նաև Էրդողանի անթաքույց նախագահական հավակնությունները, և այդ հարցում զինվորականների խիստ կեցվածքը և անգամ արտգործնախարար Աբդ. Գյուլի թեկնածության առաջադրմամբ հնարավոր չեղավ խուսափել զինվորականների հետ առճակատումից: Այդ ամենով հանդերձ, դեռ 2007 թ. շրջանառվում էին վարչապետ Էրդողանի նախագահական հավակնությունների մասին լուրերը, ընդամին, Էրդողանը երբեք բացահայտ կերպով չի խոսել իր նախագահական հավակնությունների մասին: 2011 թ. դեկտեմբեր-2012 թ. մայիս ժամանակահատվածում նա քանիցս ակնարկել է, որ նոր սահմանադրության մշակման և քաղաքական համակարգի վերակազմակերպման գործընթացում պետք է դիտարկվել նաև

³⁶¹ Տեր-Մաթևոսյան Վ., 2011 թ. խորհրդարանական ընտրությունները Թուրքիայում, Հայկական բանակ (Ռազմագիտական հանդես), հ. 16, թ. 1-2, 2011, էջ 205-216:

³⁶² Cumhurbaşkanlığı Seçimi Kanunu, Kanun no. 6271, Resmi Gazete, 26 Ocak 2012, sayı 28185; Anayasa Mahkemesi'nin 'cumhurbaşkanının görev süresi kararı', <http://www.hurriyet.com.tr/gundem/20767858.asp>

նախագահական համակարգին անցնելու տարբերակը, հավելելով, որ տասնամյակներ շարունակ Թուրքիայում գործել է խորհրդարանական համակարգ, որն առաջ է բերել մի շարք համակարգային խնդիրներ, հետևաբար, ըստ նրա, զուցե նախագահական համակարգին անցմամբ հնարավոր լինի արմատախիլ անել այդ խնդիրների մեծ մասը³⁶³: Հասկանալի է, որ նման հայտարարության համար պետք է լինեին ծանրակշիռ հիմնավորումներ, որոնց շարքում հարկ է առանձնացնել հետևյալները. գործող պատգամավորների պաշտոնավարման ժամկետների վրա իշխող կուսակցության կանոնադրությամբ նախատեսված սահմանափակումները, 3 անգամից ավել վարչապետ դառնալու սահմանափակումը, կուսակցության ներսում տարբեր ուղղությունների առաջացման սցենարի կանխումը և այլն:

Նախագահական համակարգին անցնելու վերաբերյալ քննարկումները դարձան շատ ավելի էական, երբ ս. թ. հունիսից Սահմանադրության համաձայնեցման խորհրդարանական հանձնաժողովը սկսեց սահմանադրության նախագծի վրա աշխատանքները: ԱԶԿ-ի ազդեցիկ քաղաքական գործիչների կողմից ժամանակ առ ժամանակ քննարկման են ներկայացվում նախագահական համակարգին անցնելու վերաբերյալ թեմաներ՝ այդ հարցը ուշադրության կենտրոնում պահելու նպատակով: Թեև Էրդողանը հակված է նախագահական համակարգին անցնելու տարբերակին, սակայն կան մի քանի խնդիրներ, որոնք լուծելուց հետո միայն կարելի է խոսել այդ տարբերակի կիրառման նախ հնարավորության, ապա՝ արդյունավետության մասին:

Նախ և առաջ, եթե գործող Սահմանադրական հանձնաժողովին չհաջողվի համաձայնության գալ նոր սահմանադրության նախագծի շուրջ, ապա հնարավոր է երկու սցենարային զարգացում: Առաջինի դեպքում, դաշինք կազմելով խորհրդարանական ուժերից մեկի հետ, Էրդողանը կարող է նոր սահմանադրության նախագիծը դնել հանրաքվեի և, դատելով 2010 թ. սեպտեմբերյան հանրաքվեի արդյունքներից, նրան կհաջողվի ևս մեկ անգամ հաղթանակ արձանագրել: Այդ դեպքում ի հայտ կգա երկու մեծ խնդիր. նոր սահմանադրությունը կընկալվի որպես ԱԶԿ-ի սահմանադրություն և իր հակաժողովրդավարական բնույթով չի տարբերվի նախորդներից և, երկրորդ՝ երկրում կարող են սկիզբ առնել խորքային քաղաքական ցնցումներ: Էրդողանի համար այդ տարբերակը կարող է ունենալ անցանկալի զարգացումներ և 2015 թ. խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ն կարող է կորցնել իշխանությունը: Մյուս տարբերակով, նա կարող է ոչ թե նոր սահմանադրության ամբողջական տեքստը դնել հանրաքվեի, այլ դա անել փաթեթներով (այդ թվում՝ նախագահի լիազորությունների ընդլայնման նախագիծը), ինչպես՝ 2007 և 2010 թթ.: Այդ դեպքում նա կգնա նվազ դիմադրության ճանապարհով և գործընթացները կարող են լինել քիչ ցնցումային: Վերջին տարբերակի դեպքում է, որ նրա նախագահական հավակնությունները կարող են իրական դառնալ: Հարկ է նաև փաստել, որ եթե չընդունվի նոր սահմանադրությունը կամ չկատարվի սահմանադրական փոփոխություն, ապա գործող սահմանադրությամբ նախագահի լիազորությունները բավական թույլ են, ինչպես խորհրդարանական կառավարման այլ երկրներում: Մինչդեռ, քիչ հավանական է, որ Էրդողանը ցանկանա դառնալ թույլ նախագահ ուժեղ վարչապետի մոտ, հետևաբար, նախագահական լիազորությունների ընդլայնումից հետո միայն կարելի է խոսել Էրդողանի իրական շահագրգռվածության մասին: Իսկ եթե հնարավոր չլինի ապահովել այդ պայմանները, ապա հավանական է մնում երկու տարբերակ. առավել հավանական տարբերակ՝ Էրդողանը փոխում է ԱԶԿ-ի կանոնադրությունը և իրավունք է ստանում կրկին դառնալ վարչապետ, իսկ քիչ հավանական տարբերակ է այն, որ վարչապետ է դառնում նրա վստահելի անձանցից մեկը, և նա ղեկավարում է այդ անձի միջոցով:

³⁶³ Turkish PM Joins Debate On Presidential System, Hurriyet Daily News, May 8, 2012.

Ս. թ. սեպտեմբերի 30-ին Անկարայում անցկացված ԱԶԿ-ի հերթական համագումարը բավական կարևոր է Թուրքիայի քաղաքական կյանքում հստակություններ մտցնելու առումով: Նախնառաջ, Էրդողանը բացահայտ ակնարկեց, որ առնվազն մինչև 2023 թ. նա մտադիր է ծառայել ժողովրդին, իսկ գործող սահմանափակումների (օրենսդրական և կանոնադրական) պատճառով դա հնարավոր է անել միայն, եթե նա ընտրվի նախագահ: Երկրորդ, կարևոր հետևությունն այն էր, որ Թուրքիայի իշխող կուսակցության ղեկավարը հավատարիմ է մնում կուսակցության կանոնադրությամբ սահմանված սկզբունքներին և դեռևս չի ցանկանում շարժվել քաղաքական նպատակահարմարությամբ:

Այնուամենայնիվ, եթե քաղաքական պայմանավորվածությունների արդյունքում Թուրքիան անցում կատարի նախագահական համակարգի և Էրդողանն ընտրվի նախագահ՝ ընդլայնված լիազորություններով, ապա Թուրքիայի քաղաքական համակարգն առավել հավանական է, որ բնորոշվի ավտորիտար դրսևորումներով, որոնք կարող են վնասել թե՛ երկրի ներքաղաքական, թե՛ տարածաշրջանային կայունությանը, ԵՄ-ի ինտեգրմանը և մի շարք այլ հարցերին:

Թուրքիայի քաղաքական համակարգը, որը գործում է 1982 թ. ընդունված սահմանադրության ու դրանում կատարված փոփոխությունների համաձայն, կանգ է առել համակարգային փոփոխությունների անհրաժեշտության շեմին: Թուրքիայի քաղաքական համակարգին բնորոշ խնդիրները սակայն սկիզբ չեն առնում 1982 թ. սահմանադրությամբ և դրանց հիմքը պետք է փնտրել Օսմանյան կայսրության կառավարման ու քաղաքական համակարգերում: Թեև 1982 թ. սահմանադրության մեծ մասը փոխվել է, սակայն երկու էական խնդիրների առկայությունը շարունակում է լրջորեն խոչընդոտել քաղաքական մշակույթի փոփոխությանը. գործող սահմանադրությունում շարունակում են գործել այն կետերը, որոնք գրվել են զինվորականների թելադրանքով և համարվում են անփոխարինելի: Դրանց փոփոխության դեպքում էլ քեմալականները կանխատեսում են Թուրքիայում քաղաքական ցնցումները, և երկրորդ իրական խնդիրը սահմանադրական դրույթների ընտրովի կիրառումն է: Գաղափարական առումով ևս Թուրքիայում առկա են իրական լճացման երևույթներ: Ազգայնականության և իսլամական պահպանողականության համադրման արդյունքում ԱԶԿ-ն զգալիորեն շեղվել է 2002-2006թթ. որդեգրած բարեփոխումներից: Իրականում, բարեփոխումների ընթացքը սկսեց դանդաղել ԵՄ-ին անդամակցության բանակցություններին զուգահեռ, մինչդեռ, ակնկալվում էր բարեփոխումների քաղաքականության ակտիվացում:

Նոր սահմանադրության հետ կապված ակնկալիքները չեն կարող հենվել իրական հիմքերի վրա, քանի որ քաղաքական մշակույթի փոփոխության, պետության դերի ու հասարակության դերակատարման ոլորտներում ևս առկա է ներկա հարաբերությունների առանձին վերանայման կարիք: Թուրքիայում խնդիրների էությունը միայն օրենսդրական փոփոխություններով չի կարող լուծվել: Երկրում հարկավոր են իրական փոփոխություններ կատարել այն ոլորտներում, որոնք շարունակում են արդիական մնալ քաղաքական օրակարգում: Դրանցից կարելի է առանձնացնել հանրային կրթության ապագաղափարականացումը, օրենքների ազատականացումը, դատախարակական բարեփոխումների ոլորտում բովանդակային բարեփոխումները և այլն:

**MAIN FEATURES AND DEVELOPMENT TRENDS OF REFORMS
IN THE TURKISH POLITICAL SYSTEM**

Vahram Ter-Matevosyan

(summary)

The first decade of the 21st century was prominent in the Turkish political history for a number of reasons. Large-scale reforms in the political and social spheres were aimed to critically transform the Turkish politics and economy in order to synchronize them with the European accession criteria. The Justice and Development Party, which came to power in Turkey in 2002, claims to carry out comprehensive reforms in various fields, without giving much credit to the previous coalition governments. The article argues that the initial zeal reforms of the Justice and Development party downgraded with the passage of time and by the year 2007 it became less efficient in terms of promoting a reform agenda. The perspective of drafting a new constitution came to occupy the domestic agenda starting from 2007, but for obvious reasons it was postponed. After the June 2011 parliamentary elections drafting the new constitution became a headline however the prospects, expectations and real efforts for writing a new charter remain slim.